

ԳԼՈՒԽ Ժ.

ՅԱԿՈՒ ԶՈՒՂԱՅԵՑԻԻ

ՎԵՐՋԻՆ ԴԱԻԱՆԱԳԻՐԸ ԵՒ ՄԱՀԸ

Պատրիարքական եւ Կաթողիկոսական խնդիրներուն վերջ դնելու նպատակաւ եւ ապահովելու համար Ազգին միասնականութիւնը, Յակոբ Կաթողիկոսին կ'օժանդակեն, Կ. Պոլսոյ մէջ, Մարտիրոս Պատրիարք Կաֆացի եւ Երեմիա Չելեպի Քէոմիւրճեան: Մարտիրոս, նոյնիսկ յանձն կ'առնէ Յակոբ Կաթողիկոսին կողմէ հրաւիրակ երթալ Երուսաղէմ իր եզրեմնի հակառակորդ Եղիազար հակաթոռ Կաթողիկոսին մօտ, եւ անոր ներկայացնել Զուգայեցիին սիրոյ թուղթը, յորում սա կը գրէ. «Սիրեցեալդ իմ ի Քրիստոս, պատուական եղբայր, հայեաց եւ աղեխորով լեր ի վերայ քշուառութեան մերայնոց, որք կան ի քաղաքական Քաղաքիս. զի եւ դու մասամբ իւրիք եղեր պատճառ ցաւոցս այսոցիկ. ե՛կ այսր, եւ խորհուրդ արարեալ գտցուք ելս հնարից յօգուտ Ազգին»:

Այս հաշտարար նամակին Եղիազար կը պատասխանէ ըսելով՝ թէ «մերձ են Մեծ Պահլէօ օրերը եւ մօտալուտ է Զատիկի տօնը. հոս հաւաքուած են բազմաթիւ ուխտաւորներ, որոնք զիս չեն թողուր որ ասկէ հեռա-